«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2024-2025
Հայոց լեզու (8-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն...

Մուշեղ Իշխան

1. Սիրելի՛ բարեկամ, ուշադի՛ր կարդա տեքստը:

Կառավարությունը Գաբրիելին նվիրեց հսկայական մի առանձնատուն՝ հայրենիքին անբասիր ծառայելու համար: Նրան սպասարկում էին ռոբոտները: Ճաշասենյակում ծառայողները մատուցող ռոբոտներն էին, իսկ հյուրասենյակում մի քանիսն էին:

Սկզբում ռոբոտները շատ սիրալիր և բարյացակամ էին, անթերի կատարում էին իրենց գործը: Նրանք նաև ուրբաթախոս էին և անխոս ծառայում էին Գաբրիելին: Բայց օրըստօրե նրանք դժնի և ամբարիշտ դարձան: Անընդհատ համբերությունից հանում և զայրացնում էին նրան: Մատռվակ ռոբոտը արբշիռ վարք ուներ, հյուրընկալության ռոբոտներից մեկը՝ անընդմեջ ծաղրում, իսկ մյուսը բամբասում և չարախոսում էր Գաբրիելին:

Ննջասենյակի ռոբոտը վերին ատյաններ բողոքներ էր ուղարկում՝ հերյուրանքներով ու խծբծանքներով լի: Իսկ համակարգչով աշխատող ռոբոտն էլ

իրեն երևակայում էր որպես իգական սեռի չքնաղ ներկայացուցիչ և անընդհատ բողոքում էր, որ Գաբրիելը անուշադիր է իր նման չնաշխարհիկ էակի հանդեպ:

Մի օր էլ…..

2. Տեքստից գտի՛ր և դո՛ւրս գրիր հոմանիշ բառերի զույգեր (3 միավոր):

—----------

---

3. Տեքստի ո՞ր բառերի բացատրությունն են տրված բառակապակցությունները (3 միավոր):

Գինի մատուցող—----------

Արատ չունեցող, կշտամբելու առիթ չտվող—----------

Ձեռ առնել—----------

Քիչ խոսող, սակավախոս—----------

Հարբած և վայելքների անձնատուր—----------

Գութ չունեցող, անխիղճ—----------

4. Տրված բառերը տեքստի ո՞ր բառերի հականիշներն են. հականիշ զույգերը գրի՛ր կողք կողքի(3 միավոր):

Բարեգութ, հյուղակ, անբարեհամբույր, դրվատել, ստորին, տգեղ:

—----------

---

5. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր կազմությամբ պարզ, ածանցավոր և բարդ մեկական ածական. դրանք գործածի՛ր հետևյալ կառուցվածքն ունեցող բառակապակցությունների մեջ (ընդամենը 6 բառակապակցություն) (3 միավոր):

ածական + գոյական

ածական + բայ

---

6. Տեքստում գտի՛ր, դո՛ւրս գրիր բաղադրյալ ստորոգյալները, որոշի՛ր ստորոգելիների խոսքիմասային պատկանելիությունը (3 միավոր):

7.10-12 նախադասությամբ հորինի՛ր վերևում տրված պատմության ավարտի քո տարբերակը (5 միավոր):

Հուշում. աշխատի՛ր դրսևորել երևակայություն և ստեղծագործական մոտեցում:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____